

## Սամվել Ղազարյան. Գեղանկարչայնություն քանդակային ձևերում



Տարբեր են լինում քանդակագործները. ոմանք տքնաջան աշխատում են միայն պատվերներ ստանալիս, մյուսներն՝ անկախ պատվերից օրուգիշեր որոնում են նորանոր ձևեր ու արտահայտչամիջոցներ՝ ժամանակի հետ բյուրեղացնելով իրենց ասելիքն ու ստեղծելով թանգարանային իրական արժեքներ: Վերջիններիս շարքում նաև Սամվել Ղազարյանն է: Արդեն չորս

տասնամյակ է, ինչ այս արվեստագետը հավատարիմ է իր գեղարվեստական ու մարդկային սկզբունքներին: Որոնելով ու գտնելով կերպավորման հաջող ձևեր՝ քանդակագործին հաջողվել է գերծ մնալ ամեն անգամ դրանք նույնությամբ կրկնելու գայթակղությունից և խույս տալ գեղարվեստական շտամպի երևույթից: Ապրելով իր իսկ կերտած ձևակերտումների գեղարվեստական աշխարհում՝ նա այսօր էլ շարունակում է հաստատել միայն իրեն վերապահված տեղն արդի հայ կերպարվեստում:

Սամվելը քանդակել սկսել է 5 տարեկանից: Նախնական մասնագիտական կրթությունը ստացել է Փանոս Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանում: 1978թ. Երևանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի քանդակի բաժինն ավարտելուց հետո մասնակցել է շուրջ 200 ցուցահանդեսների, ներառյալ 5 անհատականները:

Նրա բազմապիսի ու բազմադեմ քանդակները միավորվում են նախ քանդակագործական հիմնական նյութերի՝ քարի ու բրոնզի հանդեպ ունեցած հատուկ վերաբերմունքով և առանձնահատուկ մոտեցմամբ: Հրակավն ու փայտը ևս նրա համար հաճախ գործակից ու ստեղծագործական գործընթացի հավասար կողմեր են: Արվեստագետը ոչ միայն չի երկնչում նյութի բնական տարերքից, այլև պահպանելով այն՝ փորձում է առավելագույնս օգտագործել դրա նախածին ֆակտուրան, գույնն ու լույսուստվերը:

Քանդակագործին հաջողվում է նաև ճիշտ ու վարպետորեն պահել քարի անմշակ ու մշակված ծավալների ընդհանուր հաշվեկշիռը՝ համադրելով դրանք և՛ ստեղծելով «երկրորդ բնություն»: «Տիեզերքի և Քանդակի արարման ուղին նույնն է՝ Քառսից Հարմոնիա», – քանդակագործի աշխատանքն այս կերպ է բացատրում



Սամվելը, որն ազատ է իր գեղարվեստական մտածողության մեջ և քանդակներին հաճախ մոտենում է իբրև գրաֆիկական թերթերի ու գեղանկարչական կտավների: Տպավորություն ունեմ, թե հաստիչը նրա ձեռքին վրձնի նշանակություն ունի, որով ամեն ինչ կարող է անել: Ու կարևորն այն է, որ այդ հայացքը փոխանցվում է նաև մեզ՝ դիտողներին:

Իհարկե, այս հարցում Սամվել Ղազարյանին օգնել է գծին տիրապետելու հմտությունը: Պատահական չէ, որ նա երկար տարիներ քանդակագործությունից զատ Գեղարվեստաթատերական ինստիտուտում (այժմ՝ Գեղարվեստի ակադեմիա) նաև գծանկարչություն է դասավանդել ապագա քանդակագործներին:

Խորապես ինտելեկտուալ և անսպառ երևակայության տեր լինելու, ինչպես նաև գեղարվեստի իր սեփական փիլիսոփայությունն ունենալու հանգամանքները մեծապես նպաստել են, որ Սամվել Ղազարյանը հաջողություններ գրանցեր ստեղծագործական տարբեր մրցույթներում: «Ստեղծագործական տեսակետից մրցույթները լավ դպրոց են», – սա քանդակագործի համոզմունքն է:

Տպավորիչ են եղել հատկապես նրա մասնակցությունները Իտալիայի Ռավեննա քաղաքում պարբերաբար կազմակերպվող Դանթեին նվիրված բրոնզյա քանդակի միջազգային բիենալներին: Այստեղ հարկ էր գեղարվեստական ձևերի նորովի իմաստավորում՝ Դանթեի «Աստվածային կատակերգություն» գրական երկի բարդ հյուսվածքին պլաստիկ լուծումներ տալու համար: Մյուս հայ քանդակագործների թվում Սամվել Ղազարյանին հաջողվեց առանձնանալ հարյուրավոր մասնակիցներից. 1992թ. նա ստացավ 10-րդ բիենալի Գավաթ մրցանակը, իսկ 1994թ. և 1998թ. շահեց Ոսկե մեդալներ:

1998թ. Սամվելը ներկայացրեց իր «Ավետում» քանդակային կոմպոզիցիան: Այս թեմայի տասնյակ, մեկը մյուսից հետաքրքիր մեկնաբանություններ են պարունակում մեր միջնադարյան մանրանկարներն ու որմնանկարները: Չնայած քանդակագործությանը բնորոշ ժանրային ու թեմատիկ սահմանափակումներին՝ մեր ժամանակակիցը գտնում է, որ «ոչ քանդակային թեմաներ գրեթե չկան, ու ամեն ինչ էլ կարելի է քանդակել՝



լուծումը ճիշտ գտնելու դեպքում»: «Ավետման» դեպքում լուծումը գտնված է խաչաձև կոմպոզիցիայի տեսքով: Ընդ որում՝ դա նկատելի է թե՛ դիմացից, թե՛ վերևի անսահմանությունից: Քանդակն արտացոլում է այն պահը, երբ Գաբրիել հրեշտակապետն ավետում է Մարիամին Փրկչի գալստյան մասին:

Մեկ այլ նախագիծ՝ «Ես եմ աշխարհքի լոյսը» խորագրով, քանդակագործը ներկայացրել էր քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված մրցույթին՝ առաջարկելով երկֆիգուր խաչակերպ մի կոմպոզիցիա: Խաչի գաղափարը հատակագծում արտացոլված է գրանիտե չորս ուղորկված սալերի համադրությամբ: Հորինվածքում Տիրամոր կուրծքը նմանվում է հայկական եկեղեցու գմբեթի, որի կենտրոնից էլ Սուրբ լոյսը ներթափանցում է Աշխարհ՝ հայելակերպ բրոնզե շրջանակի միջով, որն արձանի կենտրոնական առանցքային դիտակետից ընկալվում է որպես պատանի Հիսուսի լուսապսակ: Հեղինակն իր այս աշխատանքը պատկերացնում է Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու առջևի փոքրիկ հրապարակում, որի պատճառով էլ քանդակի ուրվագիծը համահունչ է հիշյալ տաճարի ընդհանուր ուրվապատկերին:



Ոչ քանդակային մեկ այլ թեմայի՝ «Հայոց պատմություն», հանդիպում ենք Մամվել Ղազարյանի բրոնզաձույլ մեկ այլ աշխատանքում: Ծիշտ է, այն կերտվել է Մովսես Խորենացուն նվիրված հուշարձանի նախագծի մրցույթի առիթով, սակայն քանդակագործը վեր է բարձրացել միայն մեկ, թեկուզ և պատմական նշանավոր անձի կերպավորումից: Կլոր քանդակի սկզբունքով արված աշխատանքն իր

ուրվագծով հիշեցնում է Արարատ լեռը, որի տարբեր կողմերում դրվագված են Նոյյան տապանը, Հայկ նահապետը, մեր հավատի խորհրդանիշ հանդիսացող հայոց եկեղեցին: Քանդակի բարձրակետին՝ մեծ Մասիսի ճերմակ գագաթին ձուլված է Պատմահոր լուսապսակ ճակատը:

Նորովի կիրառելով Վերածննդի դարաշրջանի քանդակագործությունից մեզ հայտնի թերասուրյան (non finito) սկզբունքը՝ Մամվել Ղազարյանը հասնում է տպավորիչ արդյունքների՝ պատկերելով թե՛ Փոքր Մհերին, թե՛ Ծովինարին, թե՛ դիցաբանական այլ հերոսների: Ընդ որում՝ այդ ոճը նկատելի է նաև նրա բազմաթիվ գծանկարներում՝ նվիրված «Մասնա ծոեր» էպոսին: Դրանք գրական այս երկի նկարազարդումներ չեն, այլ ինքնուրույն ստեղծագործություններ մեր էպոսի թեմաներով:

Ստեղծագործական գործունեության վաղ շրջանից Սամվել Ղազարյանին զբաղեցրել է նաև երաժշտական թեմատիկան: Սովորաբար ճարտարապետությունն են նմանեցնում քարացած երաժշտության: Մինչդեռ Սամվելը փորձել և հաջողել է քանդակագործությունը վերածել ոչ միայն քարացած, այլև քարե հնչող երաժշտության:

Նրա «Մեղեդի» մարմարակերտ արձանում նույն հնչեղությունն ունեն թե՛ նվագող թավջութակահարուհին, թե՛ անշունչ քարի արձակած շնչավոր մեղեդին: Այստեղ ևս հեղինակը կարողացել է վարպետորեն համադրել բնական քարի անմշակ և ինամքով մշակված մակերեսները: Իսկ թավջութակահարուհու դեմքի կատարումն ինձ ավելի շատ թափանցիկ ջրանկար է հիշեցնում, քան սուր հատիչով տաշված սառը քարաբեկոր:



Սամվել Ղազարյանի ամենահայտնի ու սիրված գործերից է «Երաժիշտներ» եռյակը, որը ժամանակի ընթացքում մե՛կ հրակավից է պատրաստվել, մեկ՝ մարմարից, մե՛կ էլ՝ բրոնզից: Առաջինն այսօր ցուցադրվում է Տրետյակովյան պատկերասրահում: Սկզբնապես այս արձանախումբը նախատեսված է եղել Երևանի Կամերային թատրոնի ճեմասրահի համար, ապա այն ինքնուրույն կյանքի ուղեգիր է ստացել և, մերթընդմերթ փոխելով իր կատարողական «կազմը»՝ ջութակ, ֆլեյտա և թավջութակ, նորովի հայտնվել արվեստասերների առջև:



Սամվել Ղազարյանը առաջին արվեստագետներից էր, որ գործուն մասնակցություն բերեց Իջևանի քանդակի սիմպոզիումների կայացմանն ու հետագա զարգացմանը: Այսօր Իջևանի քաղաքային զբոսայգում կարելի է տեսնել նրա «Ծովինար» մարմարյա արձանը և «Միայնակ հրեշտակը»:

Այսօրանից հետո ափսոսում ես, որ Երևանում փաստորեն չկա Սամվելի որևէ կոթողային աշխատանք: Մա այն դեպքում, երբ նրա քանդակները ցուցադրվում են Էրմիտաժում, Հայաստանի ազգային պատկերասրահում, իսկ շատ գործեր էլ տեղադրված են Մոսկվայում, Բիշքեկում, Մոլդովայում, Կանադայում և այլուր: Մխիթարվում ես՝ իմանալով, որ ծրագիր կա մայրաքաղաքում տեղադրելու նրա բրոնզաձույլ «Ադամն ու Եվան»:

Լևոն Լաճիկյան